



2016թ. դեկտեմբերի 12-ին պաշտոնական հրավերով Երևանում գտնվող Պետական Էրմիտաժի գլխավոր տնօրեն Միխայիլ Պիտրովսկին այցելել է «Էրեբունի» արգելոց-թանգարան: Մ. Պիտրովսկին իր որդու` Բորիս Պիտրովսկու հետ միասին արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանի ուղեկցությամբ շրջել և ծանոթացել է թանգարանի միջանցիկ սրահում կազմակերպված ականավոր գիտնական, ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս Բորիս Պիտրովսկուն նվիրված «Բորիս Պիտրովսկու հետքերով» ժամանակավոր ցուցահանդեսին:

Նա մեծ գոհունակությամբ դիտել և անձամբ մեկնաբանել է սրահի պատերին փակցված պաստառների տեղեկույթը, որը նվիրվել է Բորիս Պիտրովսկու գիտական գործունեությանը, նրա ղեկավարությամբ իրականացված հնագիտական պեղումներին, մասնավորապես Կարմիր բլուրում, ինչպես նաև ներկայացվել է ընտանիքին` կնոջը և որդիներին վերաբերող լուսանկարներ ու պատմություններ: Առանձին ցուցափեղկերում ցուցադրվել են Բ. Պիտրովսկու հողվածները, գրքերը և նրա կողմից Կարմիր բլուրից պեղումներով հայտնաբերված սափորները, որոնք թանգարանի ֆոնդերից հանվել են հատուկ այդ ցուցահանդեսին ներկայացնելու համար:



Այնուհետև, թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում տեղի է ունեցել հանդիպում Մ. Պիտրովսկու և արգելոց-թանգարանի աշխատակիցների, պաշտոնատար անձանց, մի խումբ ճարտարապետների, հնագետների, Երևանի ԲՈՒՀ-երի ուսանողների միջև: Բացման խոսքով հանդես է եկել թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը, ապա «Էրեբունի» թանգարանի կողմից պատվավոր հյուրին նվիրել նրա հոր` Բ. Պիտրովսկու արշավախմբի կողմից Կարմիր բլուրից հայտնաբերված Ձիու գլխի արձանիկի բրոնզաձուլյ կրկնօրինակը: Ողջույնի խոսքեր են հղել Հայաստանի հնագիտության, պատմամշակութային ոլորտի այն գործիչները, ովքեր շատ թե քիչ առնչվել են «Բորիս Պիտրովսկի» մեծանուն գիտնականին: Հանդիպմանը մասնակցել և իրենց հիշողություններով կիսվել են Բ. Պիտրովսկու սաները, ովքեր ներկայումս Հայաստանի ականավոր գիտնականներից են:

Պետական Էրմիտաժի գլխավոր տնօրենը` Մ. Պիտրովսկին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության, կազմակերպված զեղեցիկ ցուցադրության և հանդիպման համար, իր

Կողմից Պետական Էրմիտաժի մասին գրքեր է նվիրել «Էրեբունի» թանգարանին: Ապա հատուկ հանդիպման մասնակիցների համար Մ. Պիոտրովսկին առանձին լուսանկարների շարքով ներկայացրել է Պետական Էրմիտաժի Ուրարտուի և Հայաստանի մշակույթի և արվեստի սրահները, արժեքավոր ցուցանմուշները: Առանձին անդրադարձ է եղել Պետական Էրմիտաժի արդի նախաձեռնությունների, նոր նախագծերի իրականացմանը:



Հանդիպման ավարտին Մ. Պիոտրովսկուն անակնկալ է մատուցվել թանգարանի մշտական ցուցասրահում, որտեղ երկու ցուցափեղկերից մեկում ցուցադրվել է Բ. Պիոտրովսկու կողմից դեռևս 1971թ. «Էրեբունի» թանգարանին նվիրած կոնյակը՝ զավեշտալի մակագրություններով, իսկ մյուսում՝ «2798 Էրեբունի-Երևան» կոնյակը, որը, նույն կերպ, տեղում մակագրվել է Մ. Պիոտրովսկու և նրա որդու՝ Բ. Պիոտրովսկու կողմից:

Կրկին շնորհակալություն հայտնելով «Էրեբունի» արգելոց-թանգարանի աշխատակազմին՝ Մ. Պիոտրովսկին հրաժեշտից առաջ լուսանկարվել է թանգարանի աշխատակիցների հետ՝ առաջիկայում կրկին «հարազատ տանը»՝ «Էրեբունի» թանգարանում հանդիպելու ակնկալիքով: